ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԲՈՄԲԵՅԻ Ս. ՊԵՏՐՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 8-ին կրկին ողողանջեցին Մումբայի (Բոմբեյ) Ս. Պետրոս հայկական եկեղեցու զանգերը՝ այս անգամ ավետելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան բարի լուրը: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որին ընկերակցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ Տ. Իգնատիոս վրդ. Մալխասյանը և Տիգրան սրկ. Բաղումյանը: Վերջին Ս. Պատարագը 1796 թ. կառուցված Ս. Պետրոս հայկական եկեղեցում մատուցվել էր շուրջ երկու տասնամյակ առաջ:

Հընթացս Սրբազան արարողության կատարվեց Ջրօրհնեք, և օրհնված ջուրը բաժանվեց Ս. Պատարագին ներկա մի քանի հայերին և ներկաներին, որոնց շնորհիվ այսօր պահպանվում է հայության ոգին ու շունչը Մումբայում: Պատարագիչ Հայր Սուրբը նաև հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ հայցելով Բեթղեհեմի մսուրի խանձարուրում ծնված Փրկչի զորակցությունը մումբայաբնակ հայերի համար՝ նրանց փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը:

«Հիշարժան օր է այսօր, որովհետև կրկին աղոթք ենք վերառաքում մեր Երկնավոր Հորը պատմական այս եկեղեցում, որն ակնհայտ վկայությունն է այն անսահման սիրո ու նվիրվածության, որ մեր նախնիք տածել են առաքելահիմն մեր Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսության հանդեպ: Աղոթքս է, որ Մեր Տիրոջ հրաշափառ Ծննդյան ավետիսը սրտապնդի և զորավիգ լինի Ձեզ՝ պարգևելով աներեր հավատ և քաջառողջություն, այն հույսով և վստահությամբ, որ դեռ երկար տարիներ ու դարեր պիտի ողողանջեն մեր եկեղեցու զանգերը՝ ավետելով հայ մարդու ներկայությունը Հնդկաստանի օրհնաբեր հողում»,-նշեց Հայր Օշականն իր խոսքում:

Ս. Պատարագին ներկա էին երկու հայուհիներ, ՀՀ պատվո հյուպատոսի Մումբայի խորհրդական Վռամ Աղաջանյանը, Հնդիկ Ուղղափառ Եկեղեցուց Տ. Աբրահամ քհն. Ժոզեֆը և մի խումբ ասորի քրիստոնյաներ: